# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 19 >> նոյեմբերի 2013թ. N 96 - Ա

ք. Արմավիր

## ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջներով.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր և վարչատնտեսական բաժիններում, ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժիններում անցկացնել 2012 թվականի բյուջետային տարվա գործունեության աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ՝ Վիգեն Խաչատրյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել աուդիտ անցկացվող բաժինների պետերին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 18 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**